ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 531-Ա

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 8-ՐԴ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով՝

1. 2026 թվականին Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու կապակցությամբ կազմակերպական աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել հանձնաժողով և հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա պարբերականությամբ վարչապետին տեղեկատվություն ներկայացնել աշխատանքների ընթացքի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.06.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ